

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 Թ. ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 16 ՆԻՍՏԻՑ

Օրակարգ

Իզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2025-

րզանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2025-26 ուս.
տարում կատարած աշխատանքների մասին:

նթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ՝ հաստատեց ներկայացված օրակարգը:

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ, այսօրվա նիստը սկսենք ընթացիկ հարցերից, այնուհետև կլսենք ամբիոնի վարիչների հաշվետվությունը: Առաջին խնդիրը, որ ուզում եմ բարձրաձայնել վերաբերվում է քննաշրջանին: Բազմաթիվ լուծարքներ ունենք

«Քիմիա» կրթական ծրագիր 2-րդ կուրս 15 ուսանողից 12-ը ունեն լուծարք, ընդորում 7ուսանող ունի 3-ական լուծարք:

Մենդի անվտանգություն» կրթական ծրագիր 2-րդ կուրս 6 ուսանողից 4-ն ունեն

«Քիմիա» կրթական ծրագիր 1-ին կուրս 20 ուսանողից 3-ը ունեն 1-ական լուծարք: Մենդի անվտանգություն» կրթական ծրագիր 1-ին կուրս 3-ուսանող ունեն 1-ական լուծարք:

Ինչ բացատրություն կա այս երևույթին

Է. Երիցյան, – (ուսանողական խորհրդի անդամ) «Ես խոսել եմ ուսանողների հետ և ակնհայտ է, որ լուծարքը, շատ դեպքերում, ուսանողներին հնարավորություն է տալիս ավելի լավ պատրաստվել և ՄՈԳ-ը բարձր պահելու կամ բարձրացնելու համար»:

Լ.Գաբրիելյան – «Քիմիա» բակալավր կրթական ծրագրի դեկավար

Այո, նման պրակտիկան գործում է, և ուսանողները նախընտրում են չներկայանալ քննության, ներկայանալ լուծարքին ավելի լավ պատրաստվելու համար:

Ա.Ս.Գալստյան – Ընթացիկ երկրորդ հարցը վերաբերվում է ուսումնական ծանրաբեռնվածություններին: Ծանրաբեռնվածությունների կազմումը կախված է նաև այլ ֆակուլտետների աշխատանքից, այս հարցը մասամբ կատարված և վերջնական տեսքը կունենանք մի փոքր ավելի ուշ: Դասախոսներին գրասենյակը անհատական ծանրաբեռնվածության ամբողջական տեսքը կուղարկի:

Ա.Ս.Գալստյան,- Անցնենք օրակարգի հիմնական հարցերին: Լսենք հաշվետվությունը.

Ելույթ ունեցավ պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանը (հաշվետվությունը կցվում է)

Ն.Դուրգարյանին հարցեր ուղղեցին.

Նիստի նախագահ Ա.Գալստյան, - Ինչպես եք կազմակերպել հետզոտական բաղադրիչով առարկանների փորձնական գործընթացը.

Ն.Ա.Դուրգարյան – Փորձարարական աշխատանքները ուսանողները իրականացրել են լաբորատոր աշխատանքների ընթացքում՝ համատեղելով ծրագրային փորձերի հետ: Աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում խնդիրներ չեն առաջանում և նման գործընթացը չի հակասում ԵՊՀ ուսումնական գործընթացի կանոնակարգին; Իհարկե, երկար ընթացող փորձերի ժամանակ, լաբորանտները հետևել են փորձերի ընթացքին՝ ապահովվելով անվտանգությունը:

Գ.Ս.Գրիգորյան – Ինչ վիճակում են լաբորատոր աշխատանքները:

Ն.Ա.Դուրգարյան – Լաբորատոր աշխատանքները թարմացված են, յուրաքանչյուր ուսանող աշխատում է ինքնուրույն:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյանը,- այժմ լսենք Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Գ.Ս.Գրիգորյանի հաշվետվությունը

Գ.Ս.Գրիգորյանի հաշվետվությունը կցվում է:

Հաշվետվության մեջ Գ.Ս.Գրիգորյանը հատուկ անդրադարձավ լաբորանտական հաստիքների՝ կրճատմանը, Նա նշեց, որ ֆիզքիմիայի լաբորանտական հաստիքների թիվը բավականին քիչ են, չնայած այն հանգամանքին որ ունեն 2 մասնագիտացված, գերժամանակակից՝ գործիքային լաբորատորիա: Նման լաբորատորիաներում պետք է աշխատի առնվազն մեկ լաբորանտ, ով գերազանց կտիրապետի գործիքների գործարկմանը:

Ա.Ս.Գալստյան- Մեր առաջնահերթ խնդիրը պետք է լինի մագիստրոսական ծրագրերի միջազգայնացման հարցը: Մագիստրոսական ծրագրերը պետք է անգլաֆիկացվեն: Պետք է ընդգրկվեն արտասահմանցի ուսանողները, քանի որ ԵՊՀ-

ը տարածաշրջանի լավագույն բուհերից է, և այն նախընտրելի կլինի արտերկրի ուսանողների և ասպիրանտների կողմից:

Ն.Ա.Դուրգարյան – Այո՛, ծրագրերի բարեփոխումները, միջազգայնացումը առաջնային խնդիր է ֆակուլտետի համար, բայց դրա հետ զուգահեռ պետք է հասկանալ, որ հասարակագիտական, հումանիտար գիտությունների համար իրականացված բարեփոխումները կիրառելի չեն՝ բնագիտական գիտությունների համար: Այս հարցով պետք է դիմել գիտխորհուրդ:

Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկեր նախքան գիտխորհրդին դիմելը՝ պետք է այս հարցերը՝ հաստիքների կրճատում, դասախոսությունների կրճատում և այլն, քննարկել ռեկտորի և պրոռեկտորների հետ, գտնել ճիշտ և ընդունելի ուղիներ և միայն դրանից հետո ներկայացնել գիտխորհուրդ: Այժմ առաջնահերթ խնդիրը ծրագրերի միջազգայնացումն է:

Նիստի նախագահ

Քիմիայի ֆակուլտետի ղեկան

Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար

Դոցենտ

Մ.Ա.Սամվելյան